ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 31 » օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-24/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ ներկայացված Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 70932522) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 24.12.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/11720-15, 28.12.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/11852-15 և 30.12.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/11886-15 գրություններով ներկայացրած փաստաթղթերի հիման վրա, 12.01.2016թ. թիվ 1/73-1/212-16 գրությամբ

դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերը նշված գրությունները և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնը 12.02.2016թ. թիվ 01/04.1/411-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2016թ. թիվ 1/73-1/212-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից ***մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (03.12.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ա/Ձ-ի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ն կարող է ներառվել Ցուցակում:

Միաժամանակ նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է Նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված

խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ին ներառելու ընթացակարգ:

2. Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 18.01.2016թ. թիվ 01/04.1/61-16 գրությամբ դիմել է Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ին, սակայն պատասխան չի ստացվել:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 15.01.2016թ. թիվ 01/04.1/56-16 գրությամբ դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), սակայն վերջինիս կողմից պատասխան չի ստացվել:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 24.12.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/11720-15 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը,

տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է եզրակացություն, համաձայն որի Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 03.12.2015թ., Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1.084.910 ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ Պատվիրատուն վերը նշված գրությանը կից Նախարարությանն է տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-24/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ ներկայացված Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԾՁԲ-15/11-15/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ն:

2. Ա/Ձ-ն հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (03.12.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝

Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ն 2015թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1.084.910 ՀՀ դրամի չափով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 11.12.2015թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 3-րդ կետով որոշում է կայացվել Կարգի 48-րդ կետի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու մասին Նախարարությունից ստացված եզրակացության հիման վրա մերժել հայտը և պայմանագիր չկնքել Ընթացակարգի 33-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ի հետ, որի ժամկետանց պարտքը կազմում է 1.084.910 ՀՀ դրամ:

6. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.02.2016թ. թիվ 01/04.1/411-16 գրությամբ արձանագրել է Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել Նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

7. Ի պատասխան Կենտրոնի 12.02.2016թ. թիվ 01/04.1/411-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն,

29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. ՍՑ-ԳԲԽ-24/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2016թ. թիվ 1/73-1/212-16 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ***ներկայացրել է կեղծ տվյալ***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն

էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 124-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկում է կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայնության դեպքում՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նպատակով նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին

2) հակառակ դեպքում կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առարկությունները և *պահանջում*

նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը:

Այսպիսով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԾՁԲ-15/11-15/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին Ա/Ձ-ն մասնակցելու նպատակով 03.12.2015թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (03.12.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ն ***2015թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1.084.910 ՀՀ դրամի չափով:***

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ի կողմից 03.12.2015թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Այսպիսով, Կենտրոնն արձանագրում է, որ Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն Ա/Ձ-ին Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ, մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-24/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ա/Ձ-ին վերագրվող խախտում թույլ տալու պահից (03.12.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Ա/Ձ-ին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.02.2016թ. թիվ 01/04.1/411-16 գրությամբ, արձանագրելով Ա/Ձ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, խնդրել է Նախարարությանը Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ

մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

Մինչդեռ, ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-24/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելն առկա չէ որևէ տեղեկատվություն Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 03.12.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ Լիանա Օհանյան Ռաֆիկի Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 70932522) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-24/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան